Ի պատասխան Ձեր 14.09.11թ. N 15/15.6/15197-11 գրության՝ կապված «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի (ԱՁ Արմեն Հասանյանի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

17.09.11թ.
№ 034/28117-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

դր. 14/5

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

20.09.11թ.
№ 01/5890-11

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 14-ի**
**15/15.6/15197-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ» ծրագրի 5-րդ և 7-րդ կետերի միջև առկա է հակասություն, մասնավորապես՝ ծրագրի 5-րդ կետում խոսքը գնում է Լոռու մարզի մասին, իսկ 7-րդ կետում՝ Արագածոտնի մարզի: Անհրաժեշտ է նշել նաև, որ ծրագրի 6-րդ կետի համաձայն ծրագրի ֆինանսավորումը ստացվել է 2010 թվականի հոկտեմբեր ամսին, մինչդեռ ծրագրի 8-րդ կետի համաձայն նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2011 թվականի օգոստոսի 23-ից հոկտեմբերի 15-ը:

Այդ կապակցությամբ առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

**Հարգանքով՝** **Հ. Թովմասյան**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա.Ստեփանյան, հեռ.՝ 380-227**

22.09.11թ.
№ 035/28407-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

Մր. 14/5

16. 09. 11 թ.
№ ՀՀՀ/3-4/6568-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. թիվ 15/15.6/15197-11 գրությանը կից ներկայացված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

16. 09. 11թ.
№ 044/27966-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
4-61-92
Fax 2-28-77

Մր. 14/5

թիվ 101/108.3.4/5080-11
«20» սեպտեմբեր 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 14.09.2011թ. թիվ 15/15.6/15197-11 գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող 1340000 դրամ ընդհանուր արժեքով ««Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արեւածագ եւ Քարինջ համայնքներ» ծրագրի մասին» որոշման նախագիծը մարզպետարանի կողմից քննության է առնվել, ինչի կապակցությամբ հայտնում եմ հետեւյալը.

Բարեգործական որակել «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող 1340000 դրամ ընդհանուր արժեքով ««Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արեւածագ եւ Քարինջ համայնքներ» ծրագիրը:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

կատ. Ա. Ջանազյան
հեռ. (0322) 2-31-02

20. 09. 11թ.
№ 114/28307-11

Վորլդ Վիժն Հայաստան
Ազգային գրասենյակ
Ռոմանոս Մելիքյան 1
Երևան, 0065
Հեռ.՝ 374 10 749 118, 749 119
Ֆաքս՝ 374 10 749 148
www.wvarmenia.am
http://meero.worldvision.org

World Vision

Դր. 14/5

Armenia
National Office
R.Melikyan 1, Malatia-Sebastia
Yerevan 0065, Armenia
tel: 374 10 749 118, 749 119
fax: 374 10 749 148
www.wvarmenia.am
http://meero.worldvision.org

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր Սիմոնյան,

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 01/5890-11 գրությամբ ներկայացված դիտողությունների Ձեզ ենք ներկայացնում «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ» լրամշակված ծրագիրը՝ բարեգործական որակելու նպատակով:

Հարգանքով

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԲԿ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ

ԳՐԱՀԱՄ ՍՏՐՈՆԳ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
094/29781
29 09 2011թ.

Դր. 14/5

# ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ» ծրագրի 5-րդ և 7-րդ կետերի միջև առկա է հակասություն, մասնավորապես՝ ծրագրի 5-րդ կետում խոսքը գնում է Լոռու մարզի մասին, իսկ 7-րդ կետում՝ Արագածոտնի մարզի: Անհրաժեշտ է նշել նաև, որ ծրագրի 6-րդ կետի համաձայն ծրագրի ֆինանսավորումը ստացվել է 2010 թվականի հոկտեմբեր ամսին, մինչդեռ ծրագրի 8-րդ կետի համաձայն նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2011 թվականի օգոստոսի 23-ից հոկտեմբերի 15-ը:<br>Այդ կապակցությամբ առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները: | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ներկայացրել է ծրագրի խմբագրված և լրամշակված տարբերակը: |

Դր. 14/5

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** Մ·14/6

**քաղ. Երևան**

**ԱՄՆ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 19-ի N 3/3.8-2/84789-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԱ/3-6/6544-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդել, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 219350.34 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (150 տեղ, 8360 կգ ընդհանուր քաշով, 210800.34 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8050 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Մ·14/6

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխասյանի կողմից

«28» սեպտեմբերի 2011

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ · REPRESENTATIVE OFFICE OF THE UNITED ARMENIAN FUND · 01574053

**Մարդասիրական օգնություն Հայաստանին**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդել, Կալիֆորնիա 91202) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններ, սոցիալական, կրթության, իրավական, առողջապահության ոլորտներ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 219,350.34 ԱՄՆ դոլար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 15-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետներ, | Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 28 սեպտեմբերի 2011 մինչև 15 նոյեմբերի 2011 |

| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 219,350.34 ԱՄՆ դոլար |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>8360 կիլոգրամ բեռ<br>210,800.34 ԱՄՆ դոլար<br>Տեղափոխում՝ 8,050.00 ԱՄՆ դոլար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Արովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 500.00 ԱՄՆ դոլար, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՄՀՀ ծովային բեռ 195**

# CARGO MANIFEST

## Ճահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

01574053

Ստացող՝
Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 010-51-20-50
Բջջ.՝ 091-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխասյան

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Որբերի օգնության հայկական հասարակություն | Կրթական խաղեր և հագուստ | Սաչոյան, քույր Ա. Հայաստանի տիրամայր | Անարատ հղիության հայ քույրերի միաբանության տիրամայր Հայաստանի կուսաստան կազմակերպություն, Հասցե՝ ք. Գյումրի, Անի թաղամաս, Չարենց 6, ՀՎՀՀ 05513266 | Բարեգործական նպատակ՝ մանկատներին բաշխելու համար | Մանկատան երեխաներ՝ երեխաներին հատկացման նպատակով | 62 | | 877 | 398 | 10,650.00 |
| Հայ օգնության ֆոնդ | Համակարգիչ | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ 02517115 | Բեռը նախատեսված է ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | 2 | | 84 | 38 | 5,685.75 |
| Գուլշուգյան, դոկտոր Նիշան | Բժշկական պարագաներ | Կոլոյան Կարեն - Երեխաների վերածնունդ | Երեխաների Վերածնունդ, Վ.Վաղարշյան 24/3, բն 3, ՀՎՀՀ 00069638 | բժշկական սարքավորումներ և նյութեր, որոնք օգտագործվում են հիմնականում, Արաբկիր բժշկական կենտրոնում: | Արաբկիր բժշկական կենտրոն երեխաների անվճար բուժման նպատակով | 14 | | 390 | 177 | 5,240.00 |
| Հայ օգնության ֆոնդ | Մոնիտորներ | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22,իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22,ՀՎՀՀ 02517115 | Բեռը նախատեսված է ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | 2 | | 38 | 17 | 300.00 |

ՄՀՀ ծովային բեռ 195

# CARGO MANIFEST

## Շահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայ-ամերիկյան մշակութային ասոցիացիա | Տեղեկատվական թերթիկներ և պարագաներ | Հակոբյան Հ.Հայ-ամերիկյան առողջության կենտրոն | Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամ, ք. Երևան, Միխիթար Հերացու 5, ՀՎՀՀ 01541443 | Բեռի պարունակությունը նախատեսված է Կենտրոնի ընդունարանի ադմինիստրատիվ աշխատակիցների և բժիշկների համար՝ այցելուների գրանցման և ինֆորմացիայի պահպանման նպատակով: | Բեռի ստացման իրական շահառուն Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամն Կենտրոնի նպատակն է Հայաստանում և տարածաշրջանում պահպանել, բարելավել մարդկանց առողջությունը, զբաղվել կանխարգելիչ բժշկությամբ, իրականացնել կրծքագեղձի, արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման, ոսկորների խտության սխտորոշմամբ կոտրվածքների կանխարգելման ծրագրեր, ինչպես նաև՝ նպաստել ընտանիքի առողջության պահպանմանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը, իրականացնել կրթական ծրագրեր: | 2 | | 72 | 33 | 1,129.00 |
| Ֆլեթչերի դիվանագիտական դպրոց | Կրթական նյութեր | Թրուզյան Սոնա, ՀՀ գլխավոր դատախազություն | ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5, 0010 | Բեռները նախատեսված են Դավիդյան հիմնադրամի ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Թավթս համալսարանի Ֆլետչերի դպրոցում կազմակերպված ուսումնական ծրագրի 2011 թվականի մասնակիցների համար: Դրանց մեջ գրքեր են, որոնք մասնակիցներն ուսումնասիրել են 2011 թվականի հունվար-հունիս ամիսներին նշված դպրոցում ուսումնառության ընթացքում: Հետևաբար՝ բեռները տրամադրվելու են ծրագրի շրջանավարտներին: | Բեռները նախատեսված են Դավիդյան հիմնադրամի ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Թավթս համալսարանի Ֆլետչերի դպրոցում կազմակերպված ուսումնական ծրագրի 2011 թվականի մասնակիցների համար: Դրանց մեջ գրքեր են, որոնք մասնակիցներն ուսումնասիրել են 2011 թվականի հունվար-հունիս ամիսներին նշված դպրոցում ուսումնառության ընթացքում: Հետևաբար՝ բեռները տրամադրվելու են ծրագրի շրջանավարտներին: | 16 | | 530 | 240 | 11,236.99 |
| Ամերիկայի հայ ավետարանչական ասոցիացիա | Կաթի փոշի մանուկների համար | Լեոնյան Ռենե, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության | Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ, Բաղրամյան 18, իրավաբանական հասցե՝ Նիկոլ Դուման 22, ՀՎՀՀ 00032803 | Բարեգործական բաշխման նպատակով՝ կարիքավոր ընտանիքներին | Ընկերակցության հովանու ներքո գտնվող կարիքավոր ընտանիքներ՝ անձնական օգտագործման նպատակով | | 12 | 9,734 | 4,415 | 27,720.00 |



9/28/2011 03:05 PM

ՄՀՀ ծովային բեռ 195

# CARGO MANIFEST

## Շահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հոլոջիք ինկ. | Բոն-Դենսիտոմետր սարք | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22,իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22,ՀՎՀՀ 02517115 | Դենսիտոմետրիայի սարքավորումները 'Հոլոջիկ' ընկերության և ամերիկահայ պրոֆեսոր Ջոն Բելեզիկյանի նվիրատվությունն է Էրեբունի բժշկական կենտրոնին, ՀՀ ԱՆ վնասվածքաբանության, օրթոպեդիայի գիտական կենտրոնին և ԼՂՀ առողջապահության նախարարությանը: | Դենսիտոմետրիայի սարքավորումները 'Հոլոջիկ' ընկերության և ամերիկահայ պրոֆեսոր Ջոն Բելեզիկյանի նվիրատվությունն է Էրեբունի բժշկական կենտրոնին, ՀՀ ԱՆ վնասվածքաբանության, օրթոպեդիայի գիտական կենտրոնին և ԼՂՀ առողջապահության նախարարությանը: | | 4 | 4,447 | 2,017 | 120,000.00 |
| Հայկական միջազգային ակնաբուժական ասոցիացիա | Օպտիկական ոսպնյակներ և շրջանակներ | Մանթարյան Ստեփան - AIOA Հայաստան | Հայկական միջազգային օֆթալմիկ միություն (ՀՄՕՄ) հայաստանյան մասնաճյուղ (h/մ) բարեգործական կազմակերպություն, քաղաք Երևան, Թամանյան 2 բն. 56; ՀՎՀՀ 00849964 | Սկսած 2006 թվականից մարդասիրական օգնության ծրագրերի շրջանակներում հատկացվում են օպտիկական ակնոցների շրջանակներ և ապակիներ, դրանք հետագայում շահառուների (անապահով բնակչության) համար համապատասխան օպտիկական ակնոց պատրաստելու և բաշխելու համար; | Շահառուները Հայաստանի և Արցախի, տարբեր հասարակական կազմակերպությունների հոգատարության տակ եղած անապահով խավն է: | 23 | | 1,840 | 835 | 20,794.00 |
| Հայ-ամերիկյան մշակութային ասոցիացիա | Համակարգիչներ և մոնիտորներ | Հակոբյան Հ.Հայ-ամերիկյան առողջության կենտրոն | Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամ, ք. Երևան, Միխիթար Հերացու 5, ՀՎՀՀ 01541443 | Բեռի պարունակությունը նախատեսված է Կենտրոնի ընդունարանի ադմինիստրատիվ աշխատակիցների և բժիշկների համար՝ այցելուների գրանցման և ինֆորմացիայի պահպանման նպատակով: | Բեռի ստացման իրական շահառուն Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամն Կենտրոնի նպատակն է Հայաստանում և տարածաշրջանում պահպանել, բարելավել մարդկանց առողջությունը, զբաղվել կանխարգելիչ բժշկությամբ, իրականացնել կրծքագեղձի, արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման, ոսկորների խտության սխտորոշմամբ կոտրվածքների կանխարգելման ծրագրեր, ինչպես նաև՝ նպաստել ընտանիքի առողջության պահպանմանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը, իրականացնել կրթական ծրագրեր: | 6 | | 190 | 86 | 4,810.00 |
| Գրեգորյան Վարդան (Նյու Յորք) | Գրքեր | Ավագյան Սաթենիկ, ՀԱՀ | Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող.40, ՀՎՀՀ 01511187, | Նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման նպատակով | Հայաստանի Ամերիկյան համալսարանի գրադարան, նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման համար | 2 | | 62 | 28 | 1,287.85 |



9/28/2011 03:05 PM

ՄՀՀ ծովային բեռ 195

# CARGO MANIFEST

Շահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա եկամտի օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն օգտագործել վերջինիս | ԱՐԿՂ | ԴԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գրքերը Վարդան (Նյու Յորք) | Գրքեր | Սարգսյան Դավիթ, 22 ազգային գրադարան | Հայաստանի Ազգային գրադարան ՊՈԱԿ, Երևան 375009, Տերյան 72, ՀՎՀՀ 01506092 | Նպատակը՝ գրադարանային անկման ծառայությունը մատուցել, ընթերցողների տեղեկատվական պահանջները բավարարել | Բեռի ստացման իրական շահառուն Հայաստանի Ազգային գրադարանն է, նկիրատվությունը կհամալրի Հայաստանի Ազգային գրադարանի ֆոնդերը | 5 | | 166 | 75 | 1,946.75 |
| | | Ընդհանուր | | | | 134 | 16 | 18,430 | 8,360 | 210,800.34 |

ՀՐ·14/6

9/28/2011 03:05 PM

Page 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՀՐ·14/6


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ. (+374 10) 59 52 26


19.09.11թ. № 3/3.8-2/84789-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. N15/15.6/15186-11 գրությամբ ներկայացված ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության կողմից կից ներկայացված ծրագրի 1-ին կետում անհրաժեշտ է նշել բարեգործության նպատակի և դրա անհրաժեշտությունը հիմնավորելու, այլ ոչ թե դոնորներից մարդասիրական օգնության հավաքագրման, առաքման, բաշխման և այլ կազմակերպական աշխատանքների նկարագրության մասին,

- ծրագրի 5-րդ կետում նշվում է, որ ծրագրի իրականացման բնագավառը սոցիալական ոլորտն է, սակայն դատելով ստացվելիք բեռների ցանկից (նաև գրքեր, համակարգչային սարքավորումներ, բժշկական պարագաներ) ծրագիրը ընդգրկում է նաև կրթության և առողջապահության ոլորտները: Ծրագրի նույն կետում որպես ծրագրի իրականացման վայր նշվում է Հայաստանի Հանրապետությունը, սակայն որոշման նախագծի 4-րդ կետում ներառված է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը,

- ծրագրի 7-րդ կետում կից հավելվածով ներկայացվող բարեգործություն ստացողների ցանկում նշված չէ կազմակերպությունների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ-ն, ինչպես նաև պարզաբանված չէ ցանկում ընդգրկված

19.09.11թ.

№ 034/28188-11

Հր. 14/6

հիմնադրամներին և հասարակական կազմակերպություններին բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: Բեռի բաշխման ցանկից պարզ չի դառնում, թե ով է բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս,

- ներկայացված ծրագրից և փաստաթղթերից չի երևում, թե ինչ պահեստավորման մասին է խոսքը, որտեղ և ինչպես է այն իրականացվելու: Ուստի պարզ չի դառնում, արդյոք նշված ծախսերը ներառվելու են կազմակերպական ծախսերի մեջ, թե ոչ, քանի որ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում հստակ ներկայացված են կազմակերպական ծախսերի տեսակները,

- հաշվի առնելով ներմուծվող բեռների կազմում գրքերի առկայությանը կարծում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 4-րդ կետում ներառել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Հր. 14/6

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N: ԱՄԿ/3-6/6544-11
15.09.2011թ.

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 14-ի համար 15/15.6/15186-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/27880-11
15.09.2011թ.

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

| | |
|---|---|
| վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ-ն, ինչպես նաև պարզաբանված չէ ցանկում ընդգրկված հիմնադրամներին և հասարակական կազմակերպություններին բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: Բեռի բաշխման ցանկից պարզ չի դառնում, թե ով է բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս,<br>- ներկայացված ծրագրից և փաստաթղթերից չի երևում, թե ինչ պահեստավորման մասին է խոսքը, որտեղ և ինչպես է այն իրականացվելու: Ուստի պարզ չի դառնում, արդյոք նշված ծախսերը ներառվելու են կազմակերպական ծախսերի մեջ, թե ոչ, քանի որ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում հստակ ներկայացված են կազմակերպական ծախսերի տեսակները,<br>- հաշվի առնելով ներմուծվող բեռների կազմում գրքերի առկայությունը կարծում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 4-րդ կետում ներառել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությանը: | |

Առ. 14/6

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2011 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

Առ. 14/7.1

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված պլաստիկ կոշիկների (30 տեղ, 8097 հատ, 3720 կգ ընդհանուր քաշով, 121455 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7500 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը անհատույց հանձնվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը՝ բժշկական և սոցիալական հաստատություններին բաշխելու նպատակով:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա.14/7.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.09.11 № 3/38-2/85220-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.09.2011թ. N15/15.1/15850-11 գրությամբ ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/29140-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա.14/7.1

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԱ/3-6/6871-11
28.09.11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 28-ի համար 15/15.1/15850-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/29028-11

*կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49*

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**սեպտեմբերի 2011 թվականի N Մ – -Ա** մր.14/7.2

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-2/85173-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N ԱԱ/3-6/6827-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հնդկաստանի Հանրապետության կառավարության կողմից տեխնիկական օժանդակություն ցուցաբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի (7 տեղ, 427 կգ ընդհանուր քաշով, 62571 հնդկական ռուփիին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

## Ցանկ

Հնդկաստանի կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը համաձայն ATPL 007B ապրանքագրի ուղարկված համակարգչային սարքավորումների

մր.14/7.2

| հ/հ | Սարքավորումների անվանումը | Ըստ մաքսային ձևակերպման /բրուտտո քաշ/ | Քանակը |
|---|---|---|---|
| 1. | Պահարան սերվերի հովացուցիչով քանդվող AMTRAK APW AUSTIN HUGHES | 250 կգ | 1 հատ |
| 2. | Պլ. մալուխատար | 138 կգ | - |
| 3. | Պլ. խճախողովակ | 39 կգ | - |

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար՝ [signature] Ա. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ԺԲ-14/7.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.09.11թ. № 3/3.8-2/85173-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.09.2011թ. N15/15.11/15734-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

28.09.11թ.
№ 034/28990-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԺԲ-14/7.2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

27.09.11թ.
№ ՀԻՀ/3-6/6827-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 26-ի համար 15/15.11/15734-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

27.09.11թ.
№ 044/28889-11

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

Հր. 17/7.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/84591-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N ՀՔ/22/8482-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի N ԱԱ/3-6/6654-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված պատվաստանյութի (36 տեղ, 1095 կգ ընդհանուր քաշով, 2010420 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8223.45 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Հր. 17/7.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.09.2011թ. № 3/3.8-2/84591-1[illegible]

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. N15/15.6/15190-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան (signature)

Ատոմ Ջանջուղազյան

034/27897-11
15.09.2011թ.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ԱՐ·17/7.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

17.09.11թ. N ՀՔ/22/8482-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. թիվ 15/15.6/15190-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (1)» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

17.09.11թ.
№ 020/28071-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐ·17/7.3

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

19.09.11թ.
№ ՀՀՆ/3-6/6654-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 14-ի համար 15/15.6/15190-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 1)**» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծում և կից փաստաթղթերում բավարար կերպով հիմնավորված չէ նման խմբաքանակի և բարձր արժեքի պատվաստանյութերի ներմուծման անհրաժեշտությունը:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

20.09.11թ.
№ 044/28267-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԴՐ-17/7.3

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

29. 09. 11թ.
№ ՆՀՆ/3-6/6899-11

**Հայաստանի Հանրապետության**
**առողջապահության նախարար**
**պարոն Հ. ՔՈՒՇԿՅԱՆԻՆ**

*Պատճենը՝* **ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Քուշկյան,

Ի պատասխան Ձեր ս/թ. սեպտեմբերի 28-ի համար ՀՔ/22/8910-11 գրության՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծը քննարկել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի առաջիկա նիստի ընթացքում:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

29. 09. 11 թ.
№ 044/29117-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

ԴՐ-17/7.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

28.09.11թ. N ՀՔ/22/8910-11
Ձեր N ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.09.2011թ թիվ 15/15.6/15502-11 գրության կապակցությամբ՝ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ուղարկված «Tetanus and Diphteria Toxoids Absorbed 0.5ml/1 dose՝ 100,000 doses» պատվաստանյութի ՀՀ ներմուծման անհրաժեշտության վերաբերյալ հայտնում եմ, համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «2010-2015 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիրը, իմունականխարգելման առաջնահերթ միջոցառումների ցանկը, իմունականխարգելման աշխատանքները համակարգող հանրապետական հանձնաժողովի կազմը, պատվաստումների ազգային օրացույցը, պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևը և իմունականխարգելման ազգային ծրագրի խնդիրները և ակնկալվող արդյունքները հաստատելու մասին» թիվ 46-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Պատվաստումների ազգային օրացույցով նախատեսված 6,16,26,36,46,56 տարեկանների շրջանում իրականացվում է դիֆթերիայի և փայտացման դեմ պատվաստումներ ԱԴՓ-Մ(Tetanus and Diphteria Toxoids Absorbed 0.5ml/1) պատվաստանյութով: Հայտնում եմ, որ յուրաքանչյուր տարի «Tetanus and Diphteria Toxoids Absorbed 0.5ml/1» պատվաստանյութի պահանջարկը կազմում է 180000 դեղաչափ (6 տարիքային խումբ՝ միջինում 30000 մարդ,

28. 09. 11 թ.
№ 020/29041-11

յուրաքանչյուրին 1 դեղաչափ): Նշեմ ,որ ԼՂՀ-ին պատվաստանյութերով ապահովումն նույնպես իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև ԼՂՀ-ի նույն տարիքային խմբերի շրջանում իրականացվող պատվաստումները, որպես նվիրատվություն ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ուղարկված «Tetanus and Diphteria Toxoids Absorbed 0.5ml/1 dose՝ 100,000 doses» պատվաստանյութի տրամադրված քանակությունը Հայաստանի Հանրապետությունում կսպառվի մինչև 2012 թվականի մայիս ամիսը (պիտանելիության ժամկետի ավարտը):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝ Ա.Մկրտչյան
Հեռախոս 52 27 21

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջարկության և դիտողության վերաբերյալ | |
| ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծում և կից փաստաթղթերում բավարար կերպով հիմնավորված չէ նման խմբաքանակի և բարձր արժեքի պատվաստանյութերի ներմուծման անհրաժեշտությունը: | ՀՀ առողջապահության նախարարությունը 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N ՀՔ/22/8910-11 գրությամբ ներկայացրել է պարզաբանում: |

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**սեպտեմբերի 2011 թվականի N Մ - -Ա**

**քաղ. Երևան**

Ար. 14/7.4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 3/3.8-2/85216-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N ՀՔ/22/8907-11, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 02-Մ-58 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N ԱԱ/3-6/6842 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (տեխնեցիումի գեներատոր (99Mo/99m Tc), 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 858 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 295.9 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ար. 14/7.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29. 09. 11թ. № 3/3.8-2/85216-11

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.09.2011թ. N15/15.11/15750-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատ. Ս. Այվազյան, հեռ. 595-227

29. 09. 11թ.

№ 034/29111-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

Ար-14/7.4

28.09.11թ. N ՀՔ/22/8907-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.09.2011թ. թիվ 15/15.11/15750-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝Ն.Փափախչյան
Հեռախոս 52 27 21

28.09.11թ.

№ 020/29037-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 543 991, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

Ար.14/7.4

№ 02-Մ-58 28.09 2011թ.

Ձեր 15/15.11/15750-11 առ 26.09. 2011թ.

[ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի հանձնաժողովի որոշման
նախագծի մասին]

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն «ՀՀ առողջապահության նախարարության «Վ.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին« ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չունի:

Հարգանքով՝

Ա.Մարտիրոսյան

Ա.Մնացականյան
581 654

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մտից թիվ 046/29049
«28» 09 2011թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Մ-14/7.4

27.09.11թ.

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ 2Ա2Ա/3-6/6842-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 27-ի համար 15/15.11/15750-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

28.09.11թ.

№ 044/28965-11

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
